Արձանագրություն N 4

<<ԾՔ-ԳՀԾՁԲ-22/1>> ծածկագրով ԳՀ ընթացակարգով հայտարարված գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր

01 փետրվար 2022թ.

ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ռ.Եղիազարյան
անդամներ՝ Վ.Հայրապետյան
Ն.Խաչատրյան
Հ.Բաբախանյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. Միաժամանակյա բանակցություններ վարելու մասին

Ընդունել ի գիտություն, որ **<<ԾՔ-ԳՀԾՁԲ-22/1>>** ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում հրավիրված միաժամանկյա բանակցություններին սահմանված ժամկետում ներկայացել է **<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ ներկայացուցիչը:**

Բանակցությունների արդյունքում **<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ–ն վերանայել է իր կողմից ներկայացված գնային առաջարկը՝** պայմանագրի կատարման համար առաջարկելով՝ **1550000 /մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ**:

2. <<ԾՔ-ԳՀԾՁԲ-22/1>> ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ **<<ԾՔ-ԳՀԾՁԲ-22/1>>** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել **<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ն՝** որպես նվազագույն գին ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել՝ **<<ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ -ն:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. <<ԾՔ-ԳՀԾՁԲ-22/1>> ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատման նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

3.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
3.2 Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է <<Գնումների մասին>> օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Անգործության ժամկետի ավարտից հետո՝ պայմանագրի կնքման նպատակով, ընթացակարգի ընտրված/հաղթող/ մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում տուժանքի ձևով՝ կնքվելիք պայմանագրի 10/տասը/ տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ տուժանքի ձևով՝ իր ներկայացրած գնային առաջարկի 15 /տասնհինգ/ տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	Ստորագրությունը
Նախագահ՝ Ռ.Եղիազարյան	
Անդամներ՝ Ն.Խաչատրյան	
Վ.Հայրապետյան	
Հ.Բաբախանյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	